ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3
«ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-9/1» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆԳՆՄԱՆ
ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 21-ը մայիսի 2021թ.
ժամը 11^{00}

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝

ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության ՌԱ վարչության ապահովման 1-ին բաժնի պետ Ա. Նազարյան,

գնահատողներ՝

ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչության ՆՏԱ բաժնի պետ բ/ծ գնդապետ Կ. Խաչունց,

ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության ՌԱ վարչության ապահովման 1-ին բաժնի գլխավոր մասնագետ Հ. Ավետիսյան,

ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչության ԸԲ ավագ սպա, բ/ծ մայոր Մ. Գալստյան,

հանձնաժողովի քարտուղար՝

ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչության ԳԿ 3-րդ բաժնի գլխավոր մասնագետ, Ա. Մաղաքյանը:

Հանձնաժողովն արձանագրեց հայտերի բացման փաստը և որոշեց նիստը շարունակել մասնակիցների կողմից ներկայացված հայտերն ուսումնասիրելուց հետո:

24.05.2021թ., ժամը 10:50-ին կայացած նիստում հանձնաժողովը շարունակեց աշխատանքները.

«ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-9/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Մաղաքյան)

1. Տեղեկություններ հայտ ներկայացրած մասնակիցների մասին.
2. «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-9/1» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4. Ներկայացված գնային առաջարկի հիման վրա՝ «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-9/1» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարար (համապատասխան) գնահատված հայտ ներկայացրած մասնակից ընտրված մասնակից որոշման մասին.
5. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ:
6. Տեղեկություններ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
7. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4 դեմ՝ 0:

1. Տեղեկություններ հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Ա. Մաղաքյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար «**Բժշկական թափոնների ոչնչացման ծառայության**» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-9/1» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

Հ/հ	Մասնակցի անվանումը
1.	«Էկոլոգիա» Վ.Կ.Հ. ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-9/1» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին.

(Ա. Մաղաքյան)

2.1 «Էկոլոգիա» Վ.Կ.Հ. ՍՊԸ-ի էլեկտրոնային հայտը էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի կողմից համարվել է հետագա գնահատման համար ընդունելի.

2.2 «Էկոլոգիա» Վ.Կ.Հ. ՍՊԸ-ի էլեկտրոնային հայտում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:

2.3 «Էկոլոգիա» Վ.Կ.Հ. ՍՊԸ-ի հայտով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-9/1» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, ***բացառությամբ՝հետևյալ դեպքի.***

«Էկոլոգիա» Վ.Կ.Հ. ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնանշման հարցմանը մասնակցելու դիմում-հայտարարությունում (Հավելված 1), հարկ վճարողի հաշվառման համարը լրացված է ոչ ամբողջական՝ **ութանիշի թվի փոխարեն լրացել է յոթանիշ թիվ:**

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել «Էկոլոգիա» Վ.Կ.Հ. ՍՊԸ-ին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունը:

25.05.2021թ., ժամը 11:40-ին կայացած նիստում հանձնաժողովն արձանագրեց, որ «Էկոլոգիա» Վ.Կ.Հ. ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում և կարգով շտկվել է արձանագրված անհամապատասխանությունը և վերջինիս հայտը գնահատեց բավարար՝ հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. Մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.

(Ա. Մաղաքյան)

3.1 «Գնումների մասին» ՀՀ օրենսդրության և սույն ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան գնային առաջարկ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

Հ/հ	Գնման առարկա	Հ/մ	Քանակը	Առանձին ծառայությունների համար նախատեսված միավորի նախահաշվային գների հանրագումար	Մրցույթին մասնակցող կազմակերպությունների				
					Հ/հ	Անվանումները	Գնային առաջարկ /ՀՀ դրամ/		
							Գները	ԱԱՀ	Ընդհանուր գին
1.	Բժշկական թափոնների ոչնչացում	կիլոգրամ	ըստ հայտերի	5,000	1.	«Էկոլոգիա» Վ.Կ.Հ. ՍՊԸ	3000	600	3600

Ներկայացված է առանձին տեսակի ծառայությունների համար առաջարկվող միավորի գների հանրագումարի արդյունքում մասնակցի առաջարկած գինը:

3.2 «Էկոլոգիա» Վ.Կ.Հ. ՍՊԸ-ի գնային առաջարկի հաշվարկման ճշտությունը (հայտով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը), ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունը համապատասխանում են (ճիշտ են):

3.3 Ըստ ներկայացված տվյալների՝ «Էկոլոգիա» Վ.Կ.Հ. ՍՊԸ-ն ԱԱՀ վճարող է:

3.4 Քանի որ ՀՀ ՊՆ կարիքների համար «Բժշկական թափոնների ոչնչացման ծառայության» ձեռքբերման համար հայտարարված «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-9/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Էկոլոգիա» Վ.Կ.Հ. ՍՊԸ-ն, հրավերի պահանջներին համապատասխան գնահատված և հայտ ներկայացրած միակ մասնակիցն էր, ուստի հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, ինչպես նաև ընթացակարգի հրավերի 8.6 և 8.7 կետերի պահանջները, գնահատող հանձնաժողովը գնի նվազեցման նպատակով **31.05.2021թ. ժամը 10:45-ին** ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5 հասցեում) որոշեց ընտրված մասնակցին որոշելու նպատակով առաջարկված գնի նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված մասնակցի հետ կազմակերպել միաժամանակյա բանակցություն:

Գնահատող հանձնաժողովի քարտուղարը նույն օրը՝ «Էկոլոգիա» Վ.Կ.Հ. ՍՊԸ-ին էլեկտրոնային եղանակով ծանուցեց նշված բանակցության վարման օրվա, ժամի և վայրի մասին:

31.05.2021թ. ժամը 10:45-ին կայացած նիստում հանձնաժողովն արձանագրեց, որ սահմանված ժամկետին կազմակերպված բանակցությանը մասնակցելու համար ծանուցված «Էկոլոգիա» Վ.Կ.Հ. ՍՊԸ-ն չներկայացավ: «Էկոլոգիա» Վ.Կ.Հ. ՍՊԸ-ի տնօրենը՝ հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին գնահատող հանձնաժողովի ուղղված գրությամբ տեղեկացրել էր, որ իր կողմից հայտով առաջարկված գինը վերջնական է և ենթակա չէ փոփոխման: Վերոգրյալով պայմանավորված, գնահատող հանձնաժողով որոշեց մասնակցի կողմից հայտով առաջարկված գինը թողնել առանց փոփոխության:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

4. Ներկայացված գնային առաջարկի հիման վրա՝ «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-9/1» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարար (համապատասխան) գնահատված հայտ ներկայացրած մասնակից ընտրված մասնակից որոշման մասին.

(Ա. Մաղաքյան)

4.1 04 .06.2021թ.-ին՝ հայտերի բացման և գնահատման նիստի ավարտի օրը, Armeps (www.armeps.am) համակարգում էլեկտրոնային գնահատման արդյունքում, գնահատող հանձնաժողովը որոշեց ներկայացված գնային առաջարկի հիման վրա «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-9/1» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարար գնահատված «Էկոլոգիա» Վ.Կ.Հ. ՍՊԸ-ն ճանաչել ընտրված մասնակից:

4.2 Գնահատող հանձնաժողովը հաստատեց «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-9/1» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

4.4 «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-9/1» ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածների պահանջները:

5. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ:

(Ա. Մաղաքյան)

5.1 «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-9/1» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

6. Հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

(Ա. Մաղաքյան)

6.1 Մասնակցի կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

7. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա. Մաղաքյան)

«ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-9/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը անցկացնել ոչ ուշ, քան գնման պայմանագրեր չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող աշխատանքային օրը, ժամը 11:00-ն, ք. Երևան Բագրևանդի 5 հասցեում՝ ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող(ԳԱՊ)	Ա. Նազարյան
Գնահատող	Կ. Խաչունց
Գնահատող	Հ. Ավետիսյան
Գնահատող	Մ. Գալստյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Ա. Մաղաքյան